ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **14 օգոստոսի 2025թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Ծովինար Հովհաննիսյանը, Ծովինար Սարգսյանը և Մարատ Շահբազյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Արման Մարտիրոսյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Գրիգորյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Մարգարյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Այվազյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Գառնիկ Խաչատրյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Ծառեր հատելու (էտում) համար թույլտվություն տալու մասին:
3) 0.092 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
4) Համայնքային սեփականություն հանդիսացող հողը առանց մրցույթի կառուցապատման տրամադրելու և համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի N 89-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի Կենտրոնական փողոցում կառուցված գազատարը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00265 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
7) «ՄԵՏԱ ԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում նախատեսվող գործունեությանը անհամաձայնություն տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 103-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԾԱՌԵՐ ՀԱՏԵԼՈՒ (ԷՏՈՒՄ) ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, քննարկելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 2025 թվականի հուլիսի 3-ի N 04/10.9/3439-2025 գրությունը՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքով անցնող 220 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիներում (համայնքային սեփականություն հանդիսացող) եզրաչափերը վերականգնելու նպատակով ծառերի հատման (էտում) աշխատանքներ իրականացնելու համար՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տալ թույլտվություն:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ծառերի էտման արդյունքում առաջացած վառելափայտը տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 104-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

0.092 ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Գոռ Սեդրակյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Գոռ Սամվելի Սեդրակյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.092 հա կորիզավոր հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 11042025-10-0005, կադաստրային ծածկագիր՝ 10-042-0138-0009) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 105-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 89-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «գ» ենթակետը, քննարկելով «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության ղեկավարի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Գլաձորյան փողոց, 2-րդ նրբանցք 2 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 0.22525 հա հասարակական կառուցապատման հողը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 02062025-10-0012, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0119-0197) որպես խաղահրապարակ վերակառուցելու և պահպանելու նպատակով, 10 (տասը) տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպությանը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված հողի կառուցապատման իրավունքի վճարի չափ սահմանել տարեկան 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, որը պակաս չէ տվյալ հողի (անշարժ գույք) հարկի տարեկան դրույքաչափիից:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր՝ պարտավորեցնելով տարածքի բարեկարգումն ու խաղահրապարակի կառուցումն իրականացնել պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում:

4. Ընդունման օրվանից անվավեր ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու մասին» N 89-Ա որոշումը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 106-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱԼԻՇԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով,

համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների՝ **ավագանին որոշեց**.

1. Բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցման, արդյունավետ շահագործման և պահպանման նպատակով՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի Կենտրոնական փողոց 1-ին նրբանցք 8 հասցեում կառուցված գազատարը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21072025-10-0005) 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին (Վայոց ձորի ԳԳՄ):

2. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ Վայոց ձորի ԳԳՄ-ի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 107-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00265 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Վարդան Աբրահամյանի դիմումը՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց, 12/18 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նշանակության 0.00265 հա մակերեսով բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0051-0131) ավտոտնակով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Վարդան Գարեգինի Աբրահամյանին:

2. Վաճառքի գին սահմանել 117 710 (մեկ հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր տասը) ՀՀ դրամ (կադաստրային արժեքի 100 տոկոսը):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ-18	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 108-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

«ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ)

**Հարցի քննարկման արձանագրությունը չի հրապարակվում՝ համաձայն Եղեգնաձոր համայնքի ավագանու կանոնակարգի 165-րդ կետի*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 7-ՐԴ ԵՆԹԱԿԵՏՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԴՌՆՓԱԿ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով, Եղեգնաձոր համայնքի ավագանու կանոնակարգի 161-րդ կետով (գլուխ 11), հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Ավագյանի և Եղեգնաձոր համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Մուշեղ Ներսիսյանի առաջարկությունները՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի արտահերթ նիստի օրակարգի 1-ին կետի 7-րդ ենթակետում ներկայացված՝ ««ՄԵՏԱ ԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում նախատեսվող գործունեությանը անհամաձայնություն տրամադրելու մասին» հարցի քննարկումը շարունակել դռնփակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-17	Դեմ-1	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 109-Ա)*

Նիստին ներկա ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Մարինե Հովհաննիսյանը

_____